


THE  
DICKRIS PUBLISHING CO.  
628 Third Avenue,  
NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆԱԿՆԵՐԸ ԲԱԾ  
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒՑ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 36

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ, 16 1898

ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՒ

Լա Պուրկոյնի նաւարեկութեան զոր գնացող Հայերէն մին, Ա. Ասատուրեան՝ Հակառակ կանխահաս լուրերուն, յաջողած է մագապուր ազատիլ: Ասատուրեան անցեալ Շաբաթ օր քաղաքս եկաւ երկաթուղիով և միևնոյն օրն գաղղիական շոգենաւով մեկնեցաւ Հալլըր երթալու: Այս անձի պատմութեան նայելով, Իսմայիլ Եուսուֆ, նաւարեկութեան ժամուն՝ մեծ դժուարութեամբ ու դանակ ի ձեռին յաջողած է տեղ մը գտնել իրեն, Տէր Ստեփան քահանայի և անոր ընտանեաց համար նաւակներու մէկին մէջ: Սակայն նաւուն յատակ իջած ժամանակ այս նաւակն շատ մօտ ըլլալով անոր, Հոսանքին հետ միասին ծովամոյն կորսուած է Լա Պուրկոյնի հետ: Հայ աւանատեսը կը պատմէ թէ վերջի ահաւոր րոպէին Տէր Ստեփան քահանայ բազկատարած կ'աղօթէ եղբր երբ նաւակն կտոր մը կապարի նման իջած է ջրին տակ:

ՊԱՏԵՐԱՍՏՐԱԿԱՆ

Կուրը Սանթրակոյի շուրջը կեդրոնացած է: Ամենազինքի լուրերն կը ծանուցանեն թէ ընդհանուր հրամանատար Ջօր. Մայլըս բանակապետին հասած ու հրամանատարութիւնն անձամբ վարել սկսած է: Ամերիկացիք չեն ուզեր յորձակելով գրաւել քաղաքը, զի հաշիւ եղած է թէ այդ կերպ վարուելու ծանր կորուստ պիտի պատճառէ ամերիկացոց: Ջօր. Մայլըս մտադիր է պաշարումով ստիպել թշնամին անձնատուր ըլլալ: Գաղաքին ջուրը դուրսէն կտրուած է արդէն, ու տեղիքներն սպառելու վրայ են անօթութիւն, տառապանք ու երկիւղ կը յուսացուի որ քիչ ատենէն պիտի ստիպեն Ջօր. թօրալ անձնատուր ըլլալ: Ծով. Սամսըն դեռ նաւահանգստէն դուրս կ'սպասէ, ու երբեմն կապար կը տեղայ դատապարտեալ քաղաքին և անոր ամբողջութեան վրայ:

Սանթրակոյի առջև եղող նաւային մեծ կուրը պատմութեան մէջ մէկ կատիկ յաղթանակ մը ըլլալէ զատ, Անգլիոյ և թուրք ծովային ազգաց համար մեծ ծառայութիւն մը մատուց: Ցարը ոչ ոք զիտէր Հաստատագրէ թօրփրկանքներու արժէքը պատերազմի ժամանակ. ոմանք կը կարծէին թէ այս կործանիչ գործիքներէն մին քանի մը հսկայ զրահանակներէ աւելի օգտակար կրնայ ըլլալ. շատեր լաւագոյն կը սեպէին թօրփրկանք մ'ունենալ, քան թէ շատ մը առաջնակարգ զրահանորներ: Պատերազմէն առաջ մասնագէտներէ շատեր շունչերէն իր բռնէին երբ Սպանիոյ ունեցած քաղմաթիւ թօրփրկանքներն համեմատութեան կը դնէին Լնքըլ Սամի ծովային զօրութեան հետ: Բայց վերջի ճակատամարտը ցոյց տուաւ թէ այդ թեթև ու փոքր նաւերն ոչինչ նշանակութիւն

ունէին կուրի մէջ: Բայց վերջի արագահար թնդանօթներէ արձակուած մի քանի ուռմբեր քիչ ատենի մէջ այդ կործարարներն քանդելով կործանեցին Սանթրակոյի առջև: Ծով. վաթսըն մեկնած չէ տակաւին. պատրաստութիւններն տեսնուած են, բայց կ'երեւի թէ Եւրոպական ճնշում մը գործածուած է Ուաշինգթոնի կառավարութեան վրայ: Բայց ինչ որ ալ ըլլայ, եթէ այս մի քանի օրերու մէջ խաղաղութիւնն վերահաստատելու համար զինադադար մը չ'առաջարկուի ուղղակի Սպանիոյ կողմանէ, Ծով. վաթսըն պիտի երթայ Գառնիոն ու Սպանիոյ ուրիշ կարևոր ծովեզրայ քաղաքներն ուժեղացնելու համար:

Ծով. Տուվիլի լուրեր կուզան հետ գնեալ. Մանիլայի դիւցազնը երթալով կը զօրանայ. փոխադրանքներ մէկ կողմէ ճամբայ կ'ենեն Սան Ճըրանսիկոյէ Ֆիլիպին կղզիներու գլխաւոր դիւրացնելու համար: Սակայն Գերմանիա կ'երեւի թէ որչափ է «հակիթ մը անեւ» Ֆիլիպիններու առջև: Ուրիշը կայսեր զրահանակները բարեկամական ցոյցի մը համար չէ որ Մանիլայի առջև կ'սպասեն վարպետ կատուին նման, որ թէ և իր որսի ծակին առջև կը հսկէ աչքերը զոցած, բայց արթուն է առիթէն օգուտ քաղելու, և սակայն ինչ կարևորութիւն ունի Գերմանիան, երբ ծան Պուլ, Ղուրերու թագաւորը իր անհամար մարտանաւերով պատրաստ է Լնքըլ Սամի աջ բազուկը դառնալ:

Ամերիկեան ներքին պատերազմի վէրքերը դեռ բուժուած չէին: Հարաւայիններն ընդ ահամբ կը նայէին Հիւսիսայիններուն՝ ամեն պարագայի սակ: Ջօր. Լիի պարտութեան օրէն իվեր Հարաւայինքը դեռ Յուլիսի 4 մը չի տօնեցին այնպէս որպէս կը տօնեն Հիւսիսային նահանգներ: Թէ և միևնոյն դրօշակը կը ծածանէր ամենուն վրայ, բայց Հարաւայինք սրբին մէջ իր մ'ու ատենութիւնն մը դեռ կար պահուած: Երկու պատերազմը ո'չ միայն ուղիւսնայի երկու կողմերը գտնուող երկու մեծ անգլիախօս ազգերն իրարու մ'օտեցուց ու ազգային կապով իրարու կապեց զանոնք, այլ և ատենութեան հին դժացութիւնը վերցուց երկու բաժանեալ կուսակցութեանց մէջէն: Հարաւայիններն ու Հիւսիսայիններն հաշտուած են այսօր Սանթրակոյի առջև թափուած ամերիկեան արեան առջև ու նահատակաց գերեզմաններուն վրայ, անանկ որ այս արհաւիրակը ընդհարումը իր օրհնութիւններն ու բարեբեներն այժմէն բերաւ: Անգլիոն՝ Եւրոպական քաղաքականութեան համար նոր գլուխ մը պիտի բացուի Սպանիոյ անկողմէն վերջ: Երկու անգլիական ազգերու բարոյական միութիւնն ու նիզակակցութիւնն ազգաց հաստատարակութիւնն աւրեց բոլորովին: Ճարտն բնական դաշնակիցն պիտի ըլլայ ասոնց, և ապա երեք ծովային ազգաց միութիւնն եւրոպական բո-

լոր Տէրութեանց միացեալ զօրութիւնն պիտի կրնայ հաւասարակշռել: Անգլիոյ խօսքը պատգամ կ'ըլլայ այլ ևս. Հիւսիսային Արջը անկարող պիտի ըլլայ մոնչեւ ու որսը խլել ամէն ատեն տկարին ձեռքէն: Հայ ժողովուրդը ջարդելու հրաման ոչ ոք պիտի կրնայ տալ՝ քաղաքական այս կամ այն անարգ նպատակն իրագործելու համար: Անգլիոյ նաւատորմի շարտանքի բերնէն ամօթահար ետ գալ չի պիտի ստիպուի: Ճարտն և Լնքըլ Սամ իրեն հետ կ'ըլլան ասկէ վերջ:

Յուլիս 9—11  
Ծովակալ Վաթսըն սպանիական ջուրերն պիտի երթայ Նիւրքը (դրօշակահանաւ) Օրէկոն, Այովա, Եանքի, Տիքսի և Եօսէմիթ զրահանաւերով. ծովակալին պիտի ընկերանան նաև պաշարի և ածուխի 5 նաւեր:

Տեղակալ Հըպսըն և իր 7 ընկերներն փոխանակուեցան սպանիացի տեղակալի մը և 14 զինուորներու հետ: Մէրիմաքի դիւցազուներն մեծ ոգևորութեամբ դիմաւորուեցան ամերիկացիներէ: Ծովակալ Սէրվէրա իր պաշտօնական տեղեկագրին մէջ պատասխանատու կը բռնէ Ջօր. Պլանքօ՝ իւր Սանթրակոյի նաւահանգստէն դուրս ելնելու խնդրոյն մէջ:

Նախագահը ստորագրեց շափալի կղզիներն Միացեալ Նահանգաց կցելու որոշումներն, որք անցան Գոնկրէսէն քանի մ'օրեր առաջ: Ֆիլաւտէլֆիա դրահանորը հրաման ըստացաւ շօնուրու երթալ (Հալլայի մայրաքաղաքը) ու քաղաքի քաղաքատան վրայ ամերիկեան դրօշը պարզել:

Գոնկրէսը փակուեցաւ. ասոր անցեալ շրջանին մէջ թուրքերու անգլուներն 893 միլիոն տոլարի չափ է. որոյ 362 միլիոնը, մինչև յառաջիկայ Յունիստի մէկ, պիտի յատկանայ պատերազմական ծախուց:

Սանթրակոյի ուժեղացումը թիւնն յետաձգուած է մինչև երկուշաբթի օր: Սպանիացիք որոշեալ ժամանակին՝ առանց պայմանի՝ անձնատուր ըլլալը մերժեցին: Ջօրավար Շաֆթըր քաղաքին ամեն անցքերը բռն Մայլի գալստեան կ'սպասէ:

Նաւատորմի ղեկ ու բանակը թեթևակէս ուժեղացնելու Սանթրակոյն՝ սպանիական զօրքերն հանգիստ չի ձգելու համար: Սէնթ Լուիզ օժանդակ զրահաւորը 634 սպանիացի նաւազ, 53 պաշտօնեայ և անոնց հրամանատարն ծովակալ Սէրվէրա Փօրթսմալթի ընտրաւ, ուր նաւազներն պիտի բանարկուին իբր պատերազմական գերիներ: Սէրվէրա և իր պաշտօնեայներն պիտի տարուին յԱննապօլիս՝ բանարկուելու համար: Գերի ծովակալը արտօնութիւն պիտի ունենայ Միացեալ Նահանգաց ամեն կողմերն ճամբորդել՝ հսկողութեան ներքև: Գերիներուն հետ Ամերիկացիք շատ աղէկ կերպիւ կը վարուին: Պաղաղութեան դիմումներ ըս-

կըսած են ըլլալ: Գաղղիական Ուաշինգթոնի դեսպանն երկուշաբթի օր երկու ժամ նախագահին հետ փակուած մնաց՝ կը կարծուի թէ պատերազմի մասին հասկացողութեան մը գալու համար:

Նախագահ Մաք Բիւնլի խաղաղութեան ո' և է առաջարկութիւն նշկատողութեան չի պիտի առնէ, մինչև որ Սպանիա ուղղակի դիմում չ'ընէ Ուաշինգթոնի կառավարութեան:

Յուլիս 12—14  
Ջօր. Մայլըս, ընդհանուր հրամանատարը, Սանթրակոյ հասաւ Եէյլ օժանդականաւով:

Լոնտոնի Թայմզը կը լսէ թէ Սակասթայի նախարարութիւնն հրաժարած է:

Միացեալ Նահանգաց խաղաղութեան պայմաններն կ'ըսուի թէ հետեւեալներն պիտի ըլլան. Բիւպայի, Փօրթօ Ռիքօյի և Գանարեան կղզիներու մէջ նաւահանգիստի մը գրաւումը. 240 միլիոն տոլար պատերազմական տուգանք. Ֆիլիպին կղզիներու ժամանակաւոր գրաւումն՝ իբր աւանդապահովութեան տուգանաց վճարման:

Սէրվէրայի կորսնցուցած զրահանաւերէն մին Մարիա Թէրէսան միայն կարելի պիտի ըլլայ ազատել:

Բանակին մէջ ղեղին աննդի փոխանցիկ հիւանդութիւնն երևան եկած է ի Բիւպայ: Կառավարութիւնը հրաման դրկեց ամերիկեան հրամանատարին ալ չի յետաձգել յարձակումը, և եթէ զօր. թօրալ տեղի չի տայ Հինգշաբթի կէսօրին, յարձակիլ Սանթրակոյի վրայու գրաւելոյն:

Ընդհանուր հրամանատար Ջօր. Մայլըս կը հեռագրէ կառավարութեան թէ զօր. թօրայ հրահանգ ստացած է Սպանիայէն յանձնել Սանթրակոյն, եթէ ամերիկացիք թոյլ տան սպանիական բանակին Սպանիայ վերադառնալ: Ուաշինգթոն իր պահանջին վերայ հաստատ կը մնայ:

Ծով. Տուվիլ լսելով թէ Գերմանական Իրէն զրահաւորը արգիլեր է ապստամբներուն յարձակիլ սպանիացոց վրայ ի Սուպիկ, երկու ամերիկեան զրահանաւեր դրկեր է խընդիւրը քննելու համար. երբ այս վերջինք Սուպիկ կը հասնին, Գերմանք անմիջապէս կը մեկնի: Կարճատև ուժեղացումը մէջ մը վերջ՝ կրանտ կարևոր կղզին ու 500 սպանիացիներ անձնատուր կ'ըլլան ամերիկեան երկու զրահանաւերուն:

ԿՈՐՈՍԻՍ ԵՒ ԳԻՒՏ

Պէյրուցի Տիկին մ. Եղիարէթ Մանուկեան (Եօզպէկեան), որ իւր Մարիամ և Հռեփիմէն անուն զաւակներով երբեմն Պէյրուցի Հայոց վանքի տան մէջ կը բնակէր, վերջերս մեկնած է ի Փարիզ և կամ յԱմերիկայ: Իր ազգականք կրնայ ընդ որ Տիկ. Մանուկեանի ուր ըլլալը գիտցող բարեկամք հաճին տեղեկութիւն տալ թերթիս Սմբաբարութեան 4

Գէորգ ձիկէրճեան անուն անձին երկու նամակ կայ Սմբաբարութեան քով, զորս կ'սպասենք իրենց տիրով յղել կամ յանձնել:



**ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ**  
 Կը Հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,  
**ՏԻԳՐԻՍ** Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:  
 Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, . . . . . ԳԱՆՁԱՊԵՏ.  
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**  
**ՄԻԱՏԵՆԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ**  
**ԲԱՆՏԱՍՏԱԹԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ**

Տարեկան	Տ. ՍԹ.	Տարեկան	10 Փրանք.
Վեցամսեայ	50	Բաժանորդագրին ԿԱՆՆԻԿ	
Յուսմսեայ	75	Վճարելի է միշտ:	
	40		

Մտար կամ նամակ ուղղել Հետեւեալ Հասցէին՝  
 To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆՈՒ ԵՈՐՔ, ՇԱՐԱԹ, ՅՈՒԼԻՍ 16 1898.

Ս Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

Սպանիան նոր Ամերիկա  
 ԿԱՐԳԸ ՁԵՐՆ Է, ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐՐ մը ստեղծեց, պատե-  
 րազմիկ մեծ ազգ մը  
 երևան ըրաւ՝ աշխարհի քաղաքականութիւնն ի հիմանց  
 փոխելու համար: Ականաւոր անգլիացի գրող մը վերջերս  
 իրաւամբ գրտել կուտար թէ այս երկիրն նոր յեղա-  
 փոխութեան մը մէջ է այժմ: 1776ին Միացեալ Նա-  
 հանգաց Հայրերն անկախութիւն ձեռք բերին՝ իբր արդ-  
 իւնք առաջին յեղափոխութեան: Իսկ անոնց զաւակներն  
 այժմեան պատերազմով իբր զինուորական պատերազմիկ  
 ազգ հրապարակ կ'ենեն՝ աշխարհ գարմացնելու համար:  
 Այլ Ընթել Սամ առջի թուրացած, վաճառականութեան ու  
 առևտուրի մէջ մեղկացած մարդը չէ միայն, զինուոր  
 մ'ալ է ասկէ վերջ՝ բառի բովանդակ նշանակութեամբ, որ  
 յարգանք և երկիրը կ'ազդէ եւրոպականայն քանի ազգաց,  
 որք երբեմն կը ծիծաղէին քնացող առիւծին անտարբերու-  
 թեան վրայ: Սպանիացիք պատճառ եղան այս առիւծն ոտ-  
 թի հանելու: Եւ ոտքի վրայ է այժմ ու պիտի ըլլայ աս-  
 կէ վերջ:

Ներկայ պատերազմի վերջը մտն է. քիչ օրէն Հպարտ  
 Սպանիան՝ ստիպուած՝ իր գէնքը վար պիտի դնէ Ընթել Սա-  
 մի ոտքերուն առջև, և անձնատուր ըլլայ անպայման կերպիւ:  
 Բայց Ընթել Սամ սուրը պատեան պիտի դնէ՞ Արևելից  
 հիւանդ մարդու հաշիւն ալ մաքրելէ առաջ: Սուլթանի  
 երկիրներուն մէջ ամերիկացիք ահաւոր կորուստներ ունե-  
 ցած են կոտորածներու ժամանակ: Տաճիկը պարտուոր է,  
 բայց մերժած է ցարդ փոխարինել այս վնասներուն, և Հա-  
 ւանականարար պիտի մերժէ իր դարևոր սովորութեան  
 համաձայն:

Հեռատես քաղաքագէտ մ'ըլլալու հարկ չ'կայ գուշա-  
 կելու համար թէ այս պատերազմէ վերջ, նախագահ Մաք  
 Բիւնի իր վերջի խօսքը պիտի գրէ՝ այս անգամ Արևելքի  
 հիւանդ վեհափառին և պիտի ըսէ՝ Վճարէ՛: Եւ եթէ Տա-  
 ճիկ կառավարութիւնն, ինչ որ հաւանական է, այս ան-  
 զուսպ առիւծն խաբել խաբիւրել փորձէ նորէն, Հետեւու-  
 թիւնն պիտի ըլլայ այն՝ ինչ որ եղաւ դժբաղդ Մէյնի պայ-  
 թեկէն յետոյ, Հավանայի նաւահանգստին մէջ:

Կ. Պոլսոյ ամերիկեան դեսպանին Մր. Անճէլի տեղ  
 Ըսթրապի պէս կտրուկ մէկի մը կարգուելն պարզ ու սո-  
 վորական դէպք մը չէր ի հարկէ, որ տեղի ունեցաւ վեր-  
 ջերս: Նախագահ Մաք Բիւնի անյողողող մէկի մը պէտք  
 ունէր ի Կ. Պոլսոյ անոր բերնով Սուլթանի հետ խօսելու  
 համար: Եւ Ըսթրապի քիչ օրէն ճամբայ կ'ելնէ իր պաշ-  
 տօնատեղին երթալու համար:

Անգլիա Միացեալ Նահանգաց հետ է. ալ կասկած չի  
 կայ անոր: Եթէ Ընթել Սամ Սուլթանի երկիրներն արշա-  
 ւել երթայ, եւրոպական միւս Տէրութիւնք ստիպուած պի-  
 տի ըլլան չէզոք դիրք մը բռնել, ինչ որ կ'ընեն այժմ՝  
 անգլիական առիւծի երկիրդէն: Եւ տարակոյս չ'կայ թէ  
 այս պարագաներու տակ Թուրքո-Ամերիկեան փափաքելի  
 պատերազմի մը հետեւութիւնն պիտի ըլլայ այն, ինչ որ  
 եղաւ ի Մանիլա և ի Սանթիակոյ:

Եւ Թուրքո Ամերիկեան պատերազմի մ'ատեն, եթէ երբէք  
 տեղի ունենայ, ո՛վ չի գիտեր թէ Հայկական խնդիրն ու  
 ահաւոր կոտորածներն յարութիւն պիտի առնեն: Եւ ի՞նչ  
 երջանիկ օր պիտի ըլլայ այն, յորում Նախագահն կոչում  
 ընէ կամաւորներու գէնքի տակ գալ Թուրքիայ արշաւելու  
 համար . . . .

Կամ վճարելու էք անմիջապէս, Վեհափառ Տէ՛ր, և  
 կամ պատրաստ ըլլալու էք ընդունել այս արթնցած առիւ-  
 ծի սոսկալի ապտակն, որոյ բազուկներն 70 միլիոն ժողո-  
 վըրդի անձնութեամբ զօրացած է:  
 Կարգը ձերինն է, Վեհափառ Տէ՛ր: Զ. Է.

ՆԱՄԱԿ ՔԻ ՈՒԵՍՈՒՆ

Լէօնիտա նաւուն մէջ, Յունիս 25.  
 Ինձ կը թուէր թէ զբօսանալով մը շըր-  
 ջելու կ'երթայինք երբ մեր շոգենաւը, Մայիս  
 30ի առաւօտուն, ճամբայ ելաւ Պրուքլինի  
 Նէյվի Եարտէն՝ Մովակալ Սամուրի հոշակա-  
 ւոր նաւատորմի ժամանալու համար: Մո-  
 վեզը իսնուած ահագին բազմութիւնը ծա-  
 փահարութեամբ ու աղաղակներով մեզ ողջ  
 երթ մաղթեց. նաւահանգստին մէջ գտնուող  
 բոլոր մեծ ու փոքր շոգենաւերն սուլելով ար-  
 ձագանք տուին ժողովրդեան ցոյցին: Բաւա-  
 կան հեռացեր էինք նաւարանէն, երբ տակա-  
 լին թաշկինակներ, դրօշակներ ու զլխարկներ  
 կը շարժէին օդին մէջ՝ մեզ բարի ճանապարհ  
 մաղթող խումբ բազմութեան կողմէ: Երբ  
 մեր նաւ, մասնաւոր նաւավարի մը առաջ-  
 նորդութեամբ, յամրաբայլ և մեծ ուշադրու-  
 թեամբ դուրս ելաւ Նիւ Եորքի թօփիօներով  
 և ականներով պատած նաւահանգստէն, և ար-  
 շաւել սկսեց դէպի պատերազմի կեդրոնավայ-  
 րը. ալ կամաց կամաց իրաց իրական պատ-  
 կերը սկսեց պարզուիլ մեր առջև. կուռի,  
 մեռնելու կամ սպաննելու կ'երթայինք: Եր-  
 կու օր շարունակ ճամբորդելէ վերջ մեր շո-  
 գենաւն Նորֆոլք (Վերձինիա) հասաւ, և հե-  
 տեւալ օրը Լամպրթ Փոյնթէ, որ զլխաւոր  
 ամուրի կեդրոնն է պատերազմող նաւատոր-  
 մի շոգենաւն, բաւականաչափ ածուր առնե-  
 լէ վերջ՝ ջուր և առատ պաշար պարունակող  
 ամբար նաւու մը լծուեցաւ՝ զայն օրուան  
 դիւցազնին՝ Մովակալ Սամուրի տանելու հա-  
 մար: Մեքսիկոյի ծովածոցին մէջ սոսկալի ա-  
 լելիծութիւն մը խոչընդոտ եղաւ մեր յա-  
 ռաջնաղացութեան: Փոփոքազէզ ալիքներն  
 ստիպեցին մեզ աղատ արձակել մեր ճամբոր-  
 դակից բեռը, զէթ մեր շոգենաւն կրնայ ա-  
 զատելու համար: Մեծ դժուարութիւններէ  
 վերջ երբ Չարլըսթըն (Ուէսթ Վերձինիա) հան-  
 դիպեցանք, լուր տրուեցաւ մեզ կառավարու-  
 թեան կողմէ թէ սպանիական Մարիա Գրի-  
 թիանա զբահանող աւերիկեան շուրերուն  
 մէջ սեւեռուած էր այդ օրեր, և թէ պարտա-  
 ւոր էինք կազմու պատրաստ ըլլալ գիմար-  
 քելու անոր՝ եթէ երբէք թշնամի կտրէր մեր  
 ճամբան: Բայց սակայն, բարեբաղդաբար կամ  
 դժբաղդաբար, առանց զայն տեսնելու՝ ամ-  
 սոյս Այն Բի Ուէսթ ժամանեցինք: Հոս Նիւ  
 Եորք ձերնըլի մէկ լրանաւ շատ մը թերթեր  
 ու լուրեր բերաւ մեզ. ի մէջ այլոց լսեցինք  
 անկէ թէ մեր կորսնցուցած ամբարանաւուն  
 վեց նաւաստիներն աղատած էին Սիթի օֆ Լօ-  
 ըէնս նաւու շնորհէ:

Այս նաւահանգստի մէջ լռիւրդ տարօրինակ  
 ողևորութիւնն անկարելի է նկարագրել. մարդ  
 ակնատես ըլլալու է, հասկնալու համար թէ  
 ինչ կը ներկայացնէ Բի Ուէսթ՝ այս պատե-  
 րազմի օրերուն մէջ: Նաւահանգստը զբահա-  
 ւորներով ու ամեն կարգի պատերազմական  
 նաւերով ծածկուած է: Ատոնք ստայանկի  
 կողմին նման անդադար կ'երթեկեն և ստէպ՝  
 դրօշականաւ ողջունելու համար՝ ասոնց ար-  
 ձագանք թնդանոթներու պայթիւնն ժամանա-  
 կի իրական պատկերն ու նշանակութիւնը կը  
 պարզեն մարդուս առաջ: Բի Ուէսթ կ'եփի.  
 մարդիկ չեն քնանար հոս. ելեքարական փնտ-  
 ուող լսյերը (սըրլ լայթ) գիշերներն ողջոյն կը  
 ցոլան շարունակ՝ նաւերուն, ինչպէս նաև ծո-  
 վեզըրը պաշտպանող պահապան զբահարե-  
 րուն երթեկը դիւրացնելու համար:

Բի Ուէսթ քաղաքը որ խաղաղութեան  
 ժամանակ 15,000 բնակիչ ունի, և որոնց մե-  
 ծամանութիւնն Բիւրպացիք, սպանիացիք ու  
 սևերը կը կազմեն, այսօր Նիւ Եորքի չափ  
 բազմամարդ լինել կը թուի. կարծես զօրքե-  
 րու ու նաւաստիներու այժմեան մայրաքա-  
 ղաքն է Բի Ուէսթ:

Անցեալ օր մասնաւոր պաշտօնով Լանքաս-  
 թըր դրօշականաւը գնացեր էի, ուր հետա-  
 քըրքական է ըսել թէ Հայու մը հանդիպե-  
 ցայ որ նաւաստիի զգեստներ կը կրէր. Հա-  
 փէն աւելի ուրախացաւ տղան այս տարօրի-  
 նակ պարագաներու տակ Հայ պաշտօնէի մը  
 հանդիպելուն համար: Խնդրեց ինձմէ որ իւր  
 անունն հրատարակութեան չի գրկեմ՝ ընտա-  
 նեկան պատճառներու համար. և խօստացայ  
 յարգել իւր խնդիր: Հայ նաւաստիները թուէր  
 թէ շատ դժգոհ էր իր ներկայ վիճակէն: Ու-  
 տելիքներէն կը գանգատէր շատ, և կը լըր-  
 րէր:

տրնջար թէ նաւաստիք ու պաշտօնեայք գէշ  
 կերպով կը վարուէին իրեն հետ: Այնչափ զըզ-  
 ուած էր, որ նաւորներու վրայ խօսած ատեն  
 թրքական ծանր ածական մը կը կցէր անոնց  
 անուն: Քսան րոպէի շափ հազիւ կրցի կե-  
 նալ Հայրենակցիս հետ, զի գործս կ'ուսկայէր  
 զիս մեկնել: Մեր բաժանումն տխուր եղաւ,  
 սակայն կը յուսանք նորէն զիրար տեսնել կամ  
 յերկինս և կամ թերևս յաղթող վերադարձէ  
 մը վերջ ի Միացեալ Նահանգս:

Թերևս հետաքրքրական պիտի ըլլայ ձեր  
 ընթերցողաց ըսել թէ երբ հանդիպեցայ այս  
 Հայ նաւաստիին, օրինակ մը ՏԻԳՐԻՍ ունէր  
 ձեռքը բռնած, զոր կը կարգար հետաքրքրու-  
 թեամբ, օրինակ մ'ալ գրպանին մէջ ունէր:  
 Երբ ճանչցաւ Հայ ըլլալս ու դիտցաւ անունս,  
 ցոյց տուաւ ինձ ձեր թերթի մէջ իմ մեկնե-  
 լուս լուրն և ուրիշ քանի մը ինձ վերաբեր-  
 եալ գրութիւններ:

Շատ մը բարեկամներէ և անձանօթ Հա-  
 յերէ նամակներ ստացած եմ, որք կը խնդրեն  
 նաւային ծառայութեան մէջ մտնել, ու միան-  
 գամայն շատ մը հարցումներ կ'ուղղեն ինձ.  
 առանձին առանձին պատասխանելու ժամանակ  
 և առիթ չունենալուս համար թող տուէք որ  
 ՏԻԳՐԻՍի միջոցաւ պատասխանեմ այժմ:

Անկարելի է թուել այն դժուարութիւն-  
 ներն ու շարքա կեանքը, որուն կ'ենթարկին  
 նաւաստիք ու ծովային զօրքեր: Անոնք որք  
 այս ծառայութեան մէջ մտնել կ'ուզեն՝ գործ  
 մը կամ շահու աղբիւր մը գտած ըլլալու նը-  
 պատակով, լաւ է որ հեռի միասն ու բնաւ չի  
 փորձեն, զի այդպիսիք ընդհանրապէս թէ ի-  
 րենց անուան և թէ ամբողջ ազգի անուն  
 վերջէն արատ պիտի բերեն: Բայց անոնք որք  
 լով Հայրենասիրութենէ մղեալ յանձն կ'առ-  
 նեն զուսուի երկրի սիրուն, այդպիսեաց չու-  
 նիմ ըսելիք, զի անոնք բնականաբար յանձն  
 կ'առնեն նաև ամեն շարժարանք՝ իրենց զգա-  
 մանց ու փափաքանաց յագուրդ մը տալու  
 համար: Սակայն ցարդ տեսածներէս և լսած-  
 ներէս դատելով՝ մեր Ամերիկացի Հայք դժ-  
 ուարաւ կրնան գիմանալ այս կեանքին որ Հե-  
 ոսի է վարդազոյն իրենց: Իմ մասին ուրախ  
 պիտի ըլլամ տեսնել մեր Հայրենակիցներէ  
 շատեր ամերիկեան դրօշակին տակ՝ Միացեալ  
 Նահանգաց համար կուռելու և մեռնելու պատ-  
 րաստ: Իբր Հայ Հպարտ պիտի զգամ երբ լը-  
 սեմ թէ մեր ազգայիններէ շատեր փառքեր  
 ու դարնինք դիպած են իրենց՝ և իրենց ազ-  
 գի անունն ու ըլլին:

Փափաքողներու համար բաց է ասպարէ-  
 զը. նաւային ամեն կեդրոններն սիրով կ'ըն-  
 դունին նորեկներն, պայմանաւ որ այս վեր-  
 ջինք կարենան պէտք եղած քննութիւններն  
 անցունել և Ֆիլիքսական կարևոր կազմութիւ-  
 նըն ունենան:

Այս սողեր գրած ատենս Հավանայէ 80  
 մղոնի չափ՝ իսկ Սանթիակոյէ 400 մղոն հեռի  
 կը գտնուինք: Հրամանի կ'սպասեմք ամեն րո-  
 պէ մեկնելու համար:

Թէ և այս պարագաներու տակ չէ կարելի  
 խոստանալ, բայց պիտի ջանամ նորէն գրել՝  
 եթէ առիթն ու պարագաները ներեն ինձ նո-  
 րէն:

Բարեկներս յղելով ՏԻԳՐԻՍի միջոցաւ բա-  
 լոր բարեկամաց ու Հայոց ընդհանրապէս:  
 Մնամ յարգանքօք

ՄՈՒՇԵՂ ՄՈՒՐԱՏԵԱՆ  
 Նաւային Դեղագործ Մ. Ն.

ԱՅՍ ԱԼ ՁԵՂԻ ՀԱՄԱՐ

Մեր այն բաժանորդներն որք հին պարտք  
 ունին մեզ, և անոնք որոց բաժանորդագրին-  
 ներն լրացած են վերջը, ներկայ թուով մէկ  
 մէկ սուպարեալ բաժանորդագրութեան խնդ-  
 րագիր պիտի ստանան իրենց թերթին հետ  
 մէկտեղ: Ատոնց առաջիններէն կը խնդրենք  
 որ իրենց բաժանորդագրութիւնն նորոգեն,  
 եթէ կը փափաքին թերթ ստանալ. իսկ եթէ  
 ո'չ, գէթ իրենց շին ՊԱՐՏԲԸ ՎՃԱՐԵՆ:  
 Իսկ վերջիններէ կ'ակնկալենք, որ Հանին  
 անյապաղ նորոգել իրենց բաժանորդագրու-  
 թիւնն և կամ այդ մասին իրենց կամքն ու գի-  
 տաւորութիւնն փութան իմացնել մեզ: Ան-  
 տարբեր գտնուողներուն թերթերը ստիպուած  
 պիտի ըլլան դադարեցնել անմիջապէս: Եւ որ-  
 պէս զի արտունջի և գանգատանաց տեղի չի  
 տանք, այժմէն մեր այս դիտաւորութիւնն ան-  
 կեղծօրէն կը յայտնենք:

ՄԱՀԱԳՈՅԺ

Բնիկ Չմշկածակցի Պ. Կարապետ ինճեյեան 24 ամեայ երիտասարդը, որ 3-4 տարիներէ ի վեր Ամերիկայ կը գտնուէր, յետ կարճատե կիւսն-դուստեան, ամուսնու երեքին կնքեց մահկանացուն Լորէնսի քաղաքային կիւսնդանոցին մէջ: Յուզարկաւորու-թիւնն տեղի ունեցաւ հետեւեալ օրն ի ներկայութեան խուռն բազմութեան մը: Թաղման պաշտօնն կատարեց Պատ. Սանդիկեան. քաղաքին գերեզ-մանատան մէջ:

Տիկին Բէյօյի Սահակեան, Տիգրա-նակերտցի, տղայաբերութենէ վերջ իր մահկանացուն կնքեց անցեալ Կի-րակի առաւօտ ի Ռէքսթ Զօպոքըն ի-հասակի 20 ամաց: Թաղումը տեղի ունեցաւ Հինգշաբթի Տէր Վահրամ Բէ-ի ձեռամբ: Հանգուցեալն Վրայ քննութիւն կատարող նշանաւոր ԲԵ-ժիշկ մը ըսած է թէ մանկաբարձի ազխութեանն և առջի բժշկին ան-գուշութեանն յառաջ եկած է Տիկ-նոջ անակնկալ մահը:

Մ Ա Ն Բ Ա Լ Ո Ի Բ

Պատուէն կը հաղորդեն թէ Մայիս 26-7 Յունիսին Իմբերիալ օթ-եակին մէջ իշխան Յովհաննէս Մե-լիքով՝ սաստիկ վիճարանութեան մը բռնուելով Վրացի իշխան Գուրիէլի հետ, ատրճանակով վիրաւորեր է անոր ծնօնը՝ անվտանգ կերպով. բայց Գուրիէլի ծառան, որ այդ միջոցին հոն կը գտնուէր, զարնեք սպաննեք է իշխան Մելիքովը: ԱՐՄԵՆԻԱ

Անցեալ Կիրակի օր հոգեհան-գրատի պաշտօն կատարուեցաւ Ս. Ոսկերբան եկեղեցւոյն մէջ՝ ի իշա-տակ Լա Պուրկոյնի Հայ գոհերուն:

Լորէնսի գրադարանի ընկերու-թեան վերջի անդամական ժողովին մէջ, կը գրէ մեր անդուցն թղթա-կիցը, քուէարկութիւն կատարուե-լով՝ Վարչական ժողովոյ անդամ ընտրուեցան Տիարք Ս. Յովսէփեան, Տ. Տէր Պօղոսեան, Ս. Պէտէրեան, Ս. Թաթեան, Յ. Գուրումեան, Յ. Սիմօնեան և Ս. Պոյաճեան: Ընդհա-նուր ժողովոյ Ատենապետ ընտրուած է Տ. Լ. Պէտրիկեան, Ատենադպիր՝ Պ. Ա. Չօլազեան:

Մեղքոն Եակիմեան անուն երի-տասարդը անցեալ Եաբաթ երեկոյ պատրաստուած էր ամուսնանալ նո-րեկ Հայուհիի մը հետ: Արժ. Սաղ վարդապետ պակը այդ երեկոյ կա-տարել մերժած ըլլալով՝ մեղ ան-ծանօթ պատճառներու համար, երի-տասարդն ամերիկացի պատուելի մը դիմեց ու պակուեցաւ:

Բիւզանդիոնի մէջ կը կարդանք թէ Ամերիկայի այլ և այլ կողմերէն Հայեր դիմում ըրած են Ազգային Պատրիարքարանին ու 100ի չափ հար-սընցու Հայ աղջիկներ խնդրած են: Ս. Պատրիարքը պատասխանած է ե-ղբ թէ որքանոցներու մէջ գտնուող որբերն դեռ չափահաս չեն, և թէ այդ Հայթայթուներ աւելի անձնա-կան միջոցներով կատարուելու են:

Իրաւունք կը լսէ թէ Օրմանե-ան Պատրիարքը հրժարած է պաշ-տօնէն, բայց Գուռը ընդունած չէ հրժարակնքը: Կ'ըսուի թէ Սսի կա-թողիկոսական ընտրութեան խնդրի մասին կարելի պիտի ըլլայ հասկաց-ուութեան մը գալ Դրան հետ:

Արեւելք լրագիրը կայտարական իրատեղով արտօնուած է հրատարակ-ուիլ:

Ռուս Կառավարութիւնն իսպառ դադարման դատապարտած է Թիֆ-լիզի «Ռեճազանք» թերթը:

Իրաւունք կ'ըսէ «Պատրիարքա-րանի քարտուղարներէ մէկը Պայպըլ Հաուզի մէջ Ս. Պատրիարքին կող-մէ տեսակցութիւն մ'ունեցեր է Մր-

Հէրիբի հետ՝ Ուրֆայի եւ Լուրիշ տեղերու որբերուն ազգ. եկեղեցիին դաւանութեան համաձայն հաղորդու-թիւն տրուելու և իրենց ուրիշ հո-գևոր պէտքերու մատակարարութեան հոգ տարուելու պէտքին վրայ, յի-շեցնելով դաւանութեան եկած գան-գատները միտնարներուն այս մա-սին բունած ընթացքին դէմ: Մ. Հե-րիբը պատասխաներ է իրենց համա-միտ չեն այդ ընթացքին, և խոս-տացեր է գրել Միտնարներուն, որ-պէս զի ջանան որբեր ինամել այն եղանակաւ, որ գանդատի տեղի չի տայ:»

Օրմանեան Պատրիարքէն պաշ-տօնական նամակ մը ստացած է Տ. Մաշթոց վարդապետ, որու մէջ Ս. Պատրիարքն կ'ըսէ թէ գաղթականաց վերադարձին կատարուալ ապահովու-թիւն կայ, պայմանաւ որ տեղական թիրք հիւպատոսք քննեն ճամբորդ-ներու վարքը, և անցազիր տան:

Սիրանոսեանի ձեռքը Տ տո-ւար ստացած է Տ. Մաշթոց վրդ. որ-բոց համար. սոյն գումարը Հրատարակ մէջ ճաշարանի մը պնակէն գոյացած է:

ԼԱՅՈՂ ԱՂՋԻԿԸ

Մինչ օրն կ'անցնի կամոց կամոց, Պատուհանիդ նստած դիմաց, Աղուոր աղջիկ ինչո՞ւ կուլաս, Ինչո՞ւ կուլաս:

Եթէ ցաւ մը ունիս, աւա՛ղ, Եթէ աշխարհն քեզ կ'աղդէ վախ. Եթէ կուլաս կտորած սրտով, Կտորած սրտով:

Ե՛կ այս բազկացս մէջ, սիրելիս, Եւ համբոյրով մը — կ'ընդունի՞ս — Արտասուք սրբեմ աչէդ, Սրբեմ աչէդ:

Եթէ ցաւ հոգ չունիս սակայն, Եւ կ'արտասուես այդպէս՝ միայն Երազներու շուքի համար, Ետեքի համար:

Արտասուքի ցողերն փայլուն Կը վայելեն այնքան սիրուն, Այդ աճերուն, Որ շրթներս կը փորձուին Ըսել «Ա՛հ լա՛ց, լա՛ց տակաւին, Լա՛ց տակաւին: Ա՛՛ ՄԱՏԷՆ

ՀԱՆՆԵԼՈՒԿ

Այս կէտերու տեղ թուանշան-ներ դիր, անանկ որ վերէն վար, ա-ջէն ձախ և ընդհակառակը գումա-րելով՝ ունենան 34. մէն մի թուա-նշան միայն մէկ անգամ գործածե-լու է, և գործածուելիք թուանշան-ներն պիտի ըլլան 15 մինչև 16:

Պատասխանը որկելու է մեզ տը-պագրեալ վերի հանելուկին հետ միա-սին: Նախապատիւ պիտի սեպենք ե-թէ թուանշաններն տպագրեալ կէ-տերու վրայ գրուին:

Պատասխաններ կ'ընդունինք մին-չև Յուլիս 25:

Լուծողներու անուններն պիտի հրատարակուին և առջիններէն երեք հոգի նուէր պիտի ստանան:

Քաղաքաց հեռուորութիւնն հաշ-ուի պիտի առնենք:

Մեր ԱՂդ թուի մէջ հրատարակ-ուած հանելուկն լուծած են Տիարք Գասպար Արզումանեան և Գ. Ոստա-նիկեան: Ահաւասիկ լուծումը.

Կ ա տ ա կ  
Ա տ ա ն ա  
Տ ա ն ի ք  
Ա ն ի կ ա  
Կ ա ք ա ւ

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Թ. Մ. Լորէնս—Ձեր զրկածը ա-ռած ենք և հրամանը կատարուած է: Գ. Ն. Թրոյ—Ստացած ենք այդ գումարը:

Յ. Կ. Սալէմ—Թող թերթերը առ այժմ միան ձեր քով: Ձեր զրկածը հասաւ մեզ: Ենթահակալ ենք:

Հ. Ա.—Ձեր հաշիւը ուղիղ է: Ն. Գ. Ա.—Լեզուկին անգղիերէնն է «ինտիկո». ձեր զրկածը չի պիտի կրնանք գործածել:

Դ. Ֆէլք—Ձերինն անյարմար է: Ուրիշներ կրնաք փորձել:

Ս. Ա. Լոլէլ—Այդ թերթը ձեր զրկած հասցէով կը զրկուի շարու-նակ:

Յ. Վ. Ս. Պրայթըն—Ձեր նամա-կը ուշ հասաւ. այդ մասին մանրա-լուրերու մէջ նոյնը դրուած էր ար-գէն:

ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ

Նկատելով որ ամեն կողմերէ շատ մը բանաստեղծութիւններ կը զրկուին մեզ, և նկատելով որ ՏԻԳ-ՐԻՍԻ մէջ տեղւոյ անձկութեան պատճառաւ չենք կարող գտնուիք ընտարակել, որոշած ենք՝ մեր ընդ ունած այս ոտանաւորներն՝ մեծաւ մասամբ՝ առանձին հատորի մը մէջ ամփոփել, պայմանաւ որ ամէն փափաքող անձ իր ոտանաւորին համար հարկ եղած շարեւոր, էլէք-թըրթայփ չինելու և տպագրելու ծախքերն վճարել յանձն առնէ կան-խաւ:

Հեղինակներն իրենց իւրաքան-չիւր ոտանաւորին համար մէկ կամ երկու օրինակ պիտի ստանան հրատա-րակուած հատորէն՝ երբ լոյս տեսնէ: Այս հատորը պիտի անուանուի «Ժողովրդական քնար»:

Մանրամասնութեանց համար գը-րել լրագրոյս Խմբագրութեան:

Այս մասին մեզ եղած շատ մը հարց-մանց կը պատասխանենք այսպէս.

2. Մէկ մարդ կրնայ մէկէ աւե-լի ոտանաւորներ ունենալ գրքին մէջ: Ընտրութեան, ընդունելու կամ մեր-ժելու իրաւունքը մեզ վերապահ-ուած է:

3. Հատորին գինն որոշուած չէ. բայց 50 սենթէ պակաս չի պիտի ըլ-լայ:

4. Գիրքը հրատարակչաց ստաց-ուածքն պիտի մնայ:

5. Ընտիր բանաստեղծութիւն մը չենք մերժեր կուսակցական ըլլալուն համար:

6. Պարբերական հրատարակու-թիւն մը չի պիտի ըլլայ այս, այլ մէկ հատոր միայն հրատարակելով պիտի բաւականանանք: Գիրքը պիտի բաղկանայ թերևս 100 երեսներէ, որ-ոյ 30ի չափը պատրուած է այժմ:

7. Գիրքը չի գոցած՝ բանաստեղ-ծութիւններ կ'ընդունինք, և չենք կրնար ըսել թէ երբ պիտի կրնանք լրացնել զայն:

ՆԵՐՔՈՒՄ

Նիւ Եորք, Յուլիս 10.

ՏԻԳՐԻՍԻ անցեալ շաբթուայ թերթին մէջ Խարբերքի երիտա-սարդի մը ամուսնութեան մասին գը-րելով՝ ըսած էր թէ «Վերջի պա-հուն երբ Արժ. Սաղ վրդ. և Տ. Վահ-րամ Բէ. կը պատրաստուէին արա-րողութեանց սկիւրի, հարսնացուն՝ լսե-լով թէ երիտասարդը, որոյ առաջին կինը մեռած էր ժամանակին և զա-ւակ մ'իսկ ունէր ողջ՝ քաջութեամբ մերժեց փեսացուն»:

Սաղ վարդապետ ո՛չ թէ պատ-րաստուած էր արարողութեանց սկը-սիլ, այլ և փեսացունն այդ գաղտ-նիքը երևան հանող ու զայն հարս-նացուին լուր տուող և այդ պակը կատարելն մերժողը ինքն եղած էր: ԱԿԱՆԱՏԵՄԸ

Ն Ո Ր Ա Վ Է Պ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

ԱՆՄԵՂ ԶՈՂԵՐ  
Դ.

—Ուրեմն եթէ ո՛չ այս է պատ-ճառը և ո՛չ այն, մտածում էր Սու-րէնեան, կայ մի այլ, բողոքովին տար-բեր պատճառ, մի տխուր իրողու-թիւն, որ Սամոթը մեծահոգութեամբ գաղտնի է պահում ինձանից և Հէնց դորա համար էլ նամակ չի գրում: Հակառակ ընդունած սովորութեան, միւս օրը Սուրէնեան նամակ գրեց Սամոթին և մտերմաբար պահանջեց ամեն բան մանրամասն գրել իրան: Երկրորդ շաբթուա՛ պատասխանը ստացաւ.

Սամոթ նամակի վերջում գրում էր. «Սրտակից ընկեր, իմ բոլոր յոյ-սերը խորասկեցան. թիւրքաց կա-շառակեր, անուճիկ պաշտօնեայները աչք տնկելով մեր աննշան հարստու-թեան վերայ, հօրս պատմաբանաց հոգակցին. մի օր ոտականութիւնը բազմաթիւ զապխաներով, հօրս բացակայութեան միջոցին, մտնում է մեր տուն՝ խուզարկելու համար: Հայրս վաճառական է և մասամբ էլ թրքամէլ, որով կարելի է գուշակել թէ այսպիսի մարդու տունը ո՛չ մի վնասակար բան չի գտնուիլ. ուստի հայրս պատերազմ է անեցոց, որ, ե-թէ ոտականութիւնը գայ խուզար-կելու, արգելք չ'լինեն, լայն բացն դռները նորանց առաջ և ձգեն իրանց կամքին: Սակայն ոտականութիւնը պատեհ առիթով ներս է մտնում մի արկղ՝ լի յեղափոխական թեր-թերով, բրոշիւրներով և շինձու կնիք ճամակներով. և զարմանքը այն է, բողոք նամակները կրում են Հնչակ-եան և Դրօշակեան յեղափոխական կնիք. այդ արկղը տեղաւորում են մեր տան ստորերկրեայ նկուղներից միում, ապա տունը զապխաներով շրջապատած սպասում են մինչև հօրս վերադառնալը: Հայրս երեկոյան դէմ Հենց որ վերադառնում է խանու-թից, ոտականապետը հրամայում է խուզարկութեան ժամանակ իրան ընկերանալ.

—Միթէ բոլոր տեղերը չ'խու-զարկեցի՞ք, վստահաբար հարցնում է հայրս.

—Ո՛չ, նկուղները մնում են. յատկապէս սպասեցի քո ներկայու-թեամբ խուզարկել. առաջնորդի՛ր մեզ.

Ոտականապետը, չորս զապիղ և հայրս իջնում են նկուղները. հայրս լապտերով առաջ է անցնում և ամեն ծակ ու ծուկ ցոյց տալիս. վերջին նը-կուղում, ոտականապետը իր ձեռ-քով տեղաւորած արկղիկը ցոյց տա-լով, հարցնում է. —այն ի՞նչ արկղ է. մօտ բերէք տեսնում սա: Նորա հրամանով արկղը բացում է, և ըս-կըսում են միջից գուրս տալ խոսն ի խոսն դարււած լրագիրներն ու նամակները. հայրս մնում է շուա-րած. ուզում է խօսել, արդարանալ. բայց ոտականապետը խօսիւ լռեց-նում է: Նոյն տեղը թեւերը ետին կապելով՝ ուղարկում է բանա. այ-նուհետև ամեն տուն, խանութ, ապ-րանք առանց հարց ու փորձի գրա-ւում, թախանում են, որովք մեծ մա-սը մտնում է քաղցած պաշտօնեա-նրի փորը. և հայրս իր թրքամո-լութեան արժանի պատիժը կրում է...»

«Ստիւի ինձ փնտրում են. նամա-կըս գրեցի իմ արգելանցում՝ մեր հեռուոր բարեկամի տնում, ուր ինք-զինքս երկու ամիս է կամաւորապէս բանտարկել եմ. այս նոյն մարդու միջոցով մի կերպ ստացայ նամակդ»: (Շարունակելի)

